# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան 24.11.2025 թ.

2025 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 11:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Ա.Կլաս լոգիստիկս» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արին–Բերդ 25 հասցեում պահեստային շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նա նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, կազմել է բնապահպանական կառավարման պլան, մշտադիտարկումների ծրագիր, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները:

Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա նշեց, որ օրենքով սահմանված կարգով հանրային 2-րդ լսման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, ծանուցվել է Երևանի քաղաքապետարանին՝ բնակիչների շրջանում իրազեկում կատարելու նպատակով: Ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ գրավոր ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին լսման ծանուցման օրվանից հետո 20

աշխատանքային օրվա ընթացքում և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ճարտարապետ Լեռնիկ Գալստյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նախագծի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները: Նշեց, որ շենքն իրականացվելու է մետաղական կոնստրուկցիաներով, շատ փոշի չի առաջացնելու, աղմուկը լինելու է նորմայի սահմաններում: Բնակելի տարածքները գտնվում են գործունեության տարածքից մոտ 100 մ հեռավորության վրա:

Ընկերության տնօրեն Ռուբեն Գյուզալյանը նշեց, որ նախատեսվող գործունությունն իրականցվելու է գործող նորմերին համապատասխան, հնարավորինս նվազեցնելով շրջակա միջավայրի վրա առաջացող ռիսկերը: Նա նշեց, որ նախատեսվող շենքը լոգիստիկ կենտրոն է, որտեղ իրականացվելու է ապրանքների փաթեթավորում, վերափաթեթավորում վտանգավոր ապրանքներ չեն լինելու, վնասակար արտանետումներ չեն կանխատեսվում, պահեստը չի ջեռուցվելու, լինելու է չոր վիճակում: Գյուզալյանը նշեց, որ տարածքը արտադրական գոտի է:

Նախաձեռնողի ներկայացուցիչների կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելուց հետո խոսքը փոխանցվեց ներկաներին: Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները հարց բարձրացրեցին կանաչապատման վերաբերյալ, ինչին ի պատասխան Գյուզալյանը պատասխանեց, որ նախագիծը կազմվել է գործող նորմերին համապատասխան և ըստ դրանց կանաչապատում չի սահմանվում: Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Էլյադա Արամյանը նշեց, որ իրենց ներկայացված նախագծում կանաչապատման տոկոսը կազմել է 40 տոկոս: Նշված հարցի վերաբերյալ Հարությունյանը ևս նշեց, որ ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվել է կանաչապատում: Գյուզալյանը դիտարկմանը պատասխանեց, որ տեղի է ունեցել սխալմունք և նախագծման թույլտվությունում կանաչապատման տոկոս է նշվել, սակայն իրենք ձեռք են բերել նոր նախագծման թույլտվություն, որում կանաչապատման տոկոսը նշված է ըստ նախագծի: Նա նշեց, որ նախագծով կառուցապատման տոկոսը փոփոխության չի ենթարկվել: Հարությունյանը նշեց, որ այդ դեպքում առաջանում է անհամապատասխանություն ՇՄԱԳ հաշվետվության և նախագծի միջև, ինչն անթույլատրելի է, ինչին ի պատասխան ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ իրենք նոր նախագծման թույլտվության հիման վրա կազմել են նոր նախագիծ, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունում նշված կանաչապատման վերաբերյալ տեղեկությունը վրիպակ է:

Ծավալվեց քննարկում թաղապետարանի աշխատակիցների և ընկերության ներկայացուցիչների միջև և բարձրացված բոլոր հարցերը պարզաբանվեցին:

Այլ հարցեր չհնչեցին և Հարությունյանը ամփոփելով հանրային լսումը՝ շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, Էրեբունի թաղապետարանի ներկայացուցիչներ, ընկերության տնօրենը, նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Ա. կլաս լոգիստիկս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ռ. Գյուզալյան**